

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. GERARD GARITTE, *Scripta disiecta* (1941—1977), t. I—II (Publications de l'Institut Orientaliste de Louvain, 21—22), Louvain, 1980, XXIX+817 p.

ԺԵՐԱՐ ԳԱՐԻՏ, Սփոյալ Երկեր (1941—1977), հ. I—II, Լուվեն, 1980, XXIX+817 էջ:

Ժերար Գարիտը, լինելով արևելաքրիստոնեական ժողովուրդների մշակույթի բազմաձևուտ հետազոտողներից մեկը, զգալի ավանդ է ներդրել ժամանակակից վրացագիտության և հայագիտության զարգացման ասպարեզում: Նրա անվան հետ է կապված հայագիտության մի ողջ բնագավառի՝ հայերենից հունարեն թարգմանված գրականության պատմաբանասիրական քննության ու գիտական արժեքավորման գործը: Եթե դեռևս մեր դարի 20-ական թթ. գիտությանը հայտնի էին հայերենից հունարեն թարգմանված միայն հատուկներն ու բնագրեր¹, ապա այժմ Ժ. Գարիտի աշխատությունների շնորհիվ նրանք արդեն պատկանում են կալմամբ: Հեղինակի երեք տասնյակից անցնող հայագիտական հետազոտություններն ըստ բովանդակության բաժանվում են երկու հիմնական խմբի՝ աշխատություններ, ներվիրված Ագաթանգեղոսի հունական խմբագրություններին ու նրանցից ծագած ալլալեղու բնագրերին, և աշխատություններ, նվիրված բաղկերցական հայերի միջավայրում ստեղծված գրական երկերի հունարեն թարգմանություններին: Երկու խմբերն էլ մասնակի խնդիրների վերաբերող հոգվածներից ու հրապարակումներից բացի ներկայացված են մեկական հիմնարար մեթոդականություններով՝ «նյութեր Ագաթանգեղոսի գրքի ուսումնասիրման համար» (1946 թ.)² և «Հայոց անցուղարձերի պատմության քննական

բնագիրը» (1952 թ.)³, որոնք մեթոդական ձևեր են հանդիսանում մերօրյա հայագետների համար:

Գրախոսվող աշխատությունը Ժ. Գարիտի 1941—1977 թթ. միջև գիտական տարբեր պարբերականների էջերում տպագրած հոգվածների լուրջագրված միայն Լուվենի արևելագիտական պաշտոնական հանդեսում՝ «Muséon»-ում հրատարակված բազմաթիվ հոգվածները՝ նկատի ունենալով, որ նրանք համեմատաբար մատչելի են մասնագետներին: Վերահրատարակությունն իրականացրել է Լուվենի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գի Լաֆոնտենը, որը և կապմել է իր ուսուցչի՝ Ժ. Գարիտի գիտական աշխատությունների լիակատար մատենագիտությունը (էջ IX—XXIX) և ժողովածունում ընդգրկված նյութերի ընդհանուր առարկայացանկը (էջ 791—814):

Ժողովածուն, որը բաղկացած է միասնաբար էջակալված երկու հատորից, ընդգրկում է հոգված, որոնցից ութը ուղղակի նվիրված են հայագիտության խնդիրներին: Հաշվի առնելով վերջիններիս կարևոր գիտական արժեքը, հարկ ենք համարում ստորև համառոտակի անդրադառնալ նրանցից յուրաքանչյուրին:

«Իսահակ կաթողիկոսին վերագրված հակահայկական դրությունները» վերնագիրը կրող հոգվածը (էջ 114—118), որ առաջին անգամ հրատարակվել է 1950 թ., նվիրված է «Հունական հայրախոսության» (Patrologia Graeca)

¹ Հմմտ. P. Peeters, Le tréfonds oriental de l'hagiographie Byzantine (Subsidia Hagiographica, 26). Bruxelles, 1950, p. 197—198 (արտատպված 1922 թ. հրատարակված հոգվածից):

² G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange (Studi e Testi, 127). Vatican, 1946, XVIII+447 p.

³ G. Garitte, La Narratio de rebuse Armeniae. Edition critique et commentar (Corpus Scriptorum Christianorum Orientalium, 132, Subs. 4). Louvain, 1952, XLIV+484 p.

132-րդ հատորում տպագրված հետևյալ երկերի հեղինակային պատկանելության խնդրին՝ ա. Խսահակ կաթողիկոսին վերագրված երկու «Ամբաստանագրերը», բ. հայոց անցուղարձերի պատմությունը (Narratio de rebus Armeniae) և գ. հայ կաթողիկոսների ժամանակագրական ցանկը: Ձեռագրական տվյալների քննության հիման վրա ժ. Գարիտը ցույց է տալիս, որ Narratio-ն ոչ մի կապ չունի մյուս գրությունների հետ և ստեղծվել է VII—VIII դդ., իսկ Խսահակին վերագրված երկու «Ամբաստանագրերը» պատկանում են XII դարի մի հեղինակի: Ուսումնասիրողի կարծիքով՝ նրան է պատկանում ևս մի հակահայկական «Ամբաստանագիր», որը պահպանվել է Վատիկանի հունական ձեռագրերից մեկում և որը կրել է հանվան հիշատակված Մովսես Խորենացու «Պատմության» զգալի աղբյուրությունը:

Սույն հոդվածի հետ որոշ առնչություն ունի ժ. Գարիտի՝ 1976 թ. հրապարակած հետևյալ փորձիկ հաղորդումը. «Վրացերեն երեսուն հակահայկական ամբաստանությունների հունական աղբյուրը» (էջ 788—790): Հեղինակը մի քանի ընդգրկված համարությունների միջոցով ապացուցում է, որ վրաց աղբյուրներում, մասնավորապես Արսեն Վալեսձեի «Դոգմատիկոնում» տեղ գտած հակահայկական երեսուն ամբաստանությունները քաղված են վերահիշյալ Խսահակ կաթողիկոսին վերագրված երկրորդ «Ամբաստանագրից»: Այս երևույթն ամբաստանություններն, ի դեպ, միջնադարում վրացերենից թարգմանվել են հայերենի և ընդգրկվել Հովհաննես Դամասկացու սնունով հայտնի մի ընդարձակ հակաճառություն մեջ⁴:

Նույն բնույթի գործերից է նաև «Հունական երկարնյա մի քաղվածաշար» թարգմանված հայերենից՝ հրապարակումը (էջ 275—285), իրագործված 1959 թ.: Խոսքը վերաբերում է Գրիգոր Լուսավորչին վերագրված մի փոքրիկ քաղվածաշարի, որը պահպանվել է Սինայի № 1699 հունական ձեռագրում (XIV դար) և բաղկացած է 13 քաղվածքից՝ 1—2. Գրիգոր Լուսավորչի վարդապետությունից, 3—11. Աթանաս Աղեքսանդրացու երկերից, 12. Անաստաս Անտիոքացուց, 13. Գրիգոր Նազիանզացուց: Քաղվածքների համեմատությունը Ագաթանգեղոսի և Աթանաս Աղեքսանդրացու հայերեն ու հունարեն ընդգրկում

հետ, ժ. Գարիտին բերել է այն համոզման, որ քաղվածաշարը, լինելով հայ քաղկեդոնականների միջավայրի գրական արտադրանքներից մեկը, հունարեն է թարգմանվել հայերենից:

Քաղկեդոնական հայերի միջավայրի պատմության է վերաբերում նաև «Սուրբ Թեոդորոս, եպիսկոպոս Կարնո—Թեոդոսիոպոլսի (VI դար)» հոդվածը (էջ 618—625), հրատարակված 1969 թ.: Հովհան Մայրապետեցու՝ Մեծկողմանց Դավիթ եպիսկոպոսին ուղղված թղթում, որը մեղ է հասել Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» շնորհիվ, որոշ տեղեկություններ են պահպանվել Հովհաննես Բագրատների հակաթու կաթողիկոսի ընտրության գործում (590-ական թթ.) Կարնո Թեոդորոս եպիսկոպոսի խաղացած դերի մասին: Ժ. Գարիտը մատանշում է նույն անձնավորությանը վերաբերող ևս մի արժեքավոր տեղեկություն, պահպանված Կոստանդնուպոլսի Բյուզանդական Հայսմավուրքում, որտեղ նույն բերի 28-ի տակ նշված է սրբերի շարքը դասված Թեոդորոս եպիսկոպոսի հիշատակի տոնը: Նման պատմի վերջինս արժանացել է, ըստ երևույթին, Մավրիկիոս կայսեր օրոք հայերի մեջ քաղկեդոնականություն տարածելու գործում խաղացած կարևոր գերի համար: Ժ. Գարիտի կարծիքով՝ Բյուզանդական Հայսմավուրքի ստեղծման ժամանակ (շուրջ 900 թ.) հավանաբար գոյություն է ունեցել Թեոդորոսի վարքի մի հունարեն բնագիր, որը, դժբախտաբար, մեղ չի հասել:

Հետևյալ երկու հոդվածները, հրատարակված համապատասխանաբար 1962 և 1965 թթ., ներկերված են Գրիգոր Լուսավորչի վարքի մի նորահայտ հունական խմբագրության. «Հայոց Ս. Գրիգորի մի նոր հունարեն վարքը» (էջ 426—442) և «Հայոց Սուրբ Գրիգորի անտիպ հունարեն վարքը» (էջ 488—545): Վերջինս հայտնաբերվել է 1961 թ. հարավսլավական Մակեդոնիայի Օբրիդա քաղաքի աղագլին թանգարանի ձեռագրերից մեկում և գիտական շրջանառության մեջ մտել Օբրիդայի վարք անունով: Նրա սկզբնամասը լիովին համընթաց է Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության 16—76-րդ պարբերություններին, սակայն այնուհետև այն շեղվում է Ագաթանգեղոսի պատմության և Լուսավորչի վարքի բոլոր հայտնի բնագրերից, հանդես գալով որպես հայկական նախատիպից ծագող մի ինքնուրույն խմբագրություն: Ժ. Գարիտի կարծիքով՝ Օբրիդայի խմբագրությունից են ծագում Լուսավորչի վարքի Ն. Մադի հրատարակած արաբական բնագիրը և Գեորգ Ասորու 714 թ. թվագրված թղթի հանրահայտ զրվագը: Ի դեպ, ժ. Գարիտին է պատկանում նաև Լուսավորչի վարքի մի այլ հու-

⁴ Հրատարակված է Բ. Կյուլեսերյանի կողմից. տե՛ս «Լոյս» շաբաթաթերթ. Կ. Պոլիս, 1905, էջ 1008—1012, 1065—1068, 1112—1115. 1906, էջ 45—48, 116—119, 213—216, 355—359, 474—479, 589—592, 810—815, 957—960, 981—984, 1075—1079, 1124—1126, 1196—1199:

նարեն խմբագրության հայտնաբերման և հրատարակման պատիվը»:

1961 թ. հրատարակված «Ս. Աթանասի Տոնական թղթերի հայերեն վկայակոչումները» հոդվածում (էջ 382—389) Ժ. Գարիտը քննության է ենթարկել Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» հայերեն բնագրի ութ հատվածներ, բաղված Աթանաս Աղեքսանդրացու Տոնական թղթերից: Հատվածներից չորսը, Տիմոթեոսի «Հակաճառության» փոխանցվելով, տեղ են գտել նաև Կոմիտաս կաթողիկոսի կազմած «Կնիք հաւատոյս ժողովածուում»: Ժ. Գարիտը վերահրատարակել է Տիմոթեոսի «Հակաճառության» նշված ութ հատվածների հայերեն բնագիրը՝ «Կնիք հաւատոյս» տարբերակով և իր կատարած լատիներեն թարգմանությամբ հանդերձ: Հայերեն բաղվածքների կարևորությունը բացատրվում է նրանով, որ Աթանասի Տոնական թղթերի հունական սկզբընադրերը չեն պահպանվել, և նրանք գիտության հայտնի են միայն ասորերեն և ղպտերէն թարգմանությունների շնորհիվ: Ասորերեն և հայերեն բնագրերի աչքի ընկնող միակերպությունն, ըստ Ժ. Գարիտի, վկայում է այն մասին, որ երկուսն էլ հարազատորեն են վերարտադրել իրենց հունական նախորինակը:

«Սուրբ եփրեմի Ի Յովնան ճառի հայերեն թարգմանությունը» հոդվածում (էջ 626—646), որը լույս է տեսել 1969 թ., Ժ. Գարիտն ուսումնասիրել է խնդրո առարկա գրվածքի հայերեն բնագիրը և հրատարակել վերջինիս լատիներեն թարգմանությունը: Եփրեմի ճառը հայտնի է ինչպես իր ասորական ընթերցանակով, այնպես և հունարեն ու վրացերեն թարգմանություններով: Հետաքրքիր է, որ մինչդեռ հունարեն և վրացերեն թարգմանությունները ներկայացված են ընդամենը մեկական ընդօրինակություններով, ապա հայերեն բնագիրը պահպանվել է տասնյակ ձևազրեքներով: Վրացերեն բնագիրն, ըստ Ժ. Գա-

րիտի, թարգմանվել է հունարենից, իսկ հայերենը՝ ասորերենից, որի վկայությունն են նրանում առկա բաղմամբիվ ասորաբանությունները: Համաձայնելով ն. Ակինյանի կարծիքին, հեղինակը եփրեմի «Ի Յովնան» ճառի հայերեն թարգմանությունը թվագրում է V դարով:

(XIII դ., 130ա—139ա), 2601 (XIII դ., 29բ—37բ), 4871 (XIII դ., 94ա—105ա), 5115 (XIII դ., 120ա—136ա), 7441 (1322 թ., 39բ—45բ), 7443 (1352/3 թ., 39ա—44բ), 3771 (1353 թ., 63ա—75բ), 1523 (XIV դ., 209բ—217բ), 3787 (XIV դ., 135ա—141բ), 3797 (XIV դ., 125ա—131բ), 4676 (XIV դ., 225բ—235ա), 4682 (XIV դ., 183ա—188բ), 4900 (XIV դ., 192ա—200ա), 1524 (1401 թ., 232ա—241ա), 4670 (1401 թ., 226ա—232բ), 1521 (1404 թ., 93բ—99բ), 994 (1409 թ., 126բ—136ա), 4517 (1438 թ., 617ա—623ա, 674ա—678բ), 996 (1442 թ., 198բ—208ա), 903 (1456 թ., 191բ—194բ), 4869 (1482 թ., 294ա—301բ), 4822 (1491 թ., 171բ—180ա), 933 (XV դ., 256բ—267բ), 3772 (XV դ., 165բ—176բ), 3791 (XV դ., 166բ—173բ), 4677 (XV դ., 82ա—90ա), 4802 (XV դ., 201բ—209ա), 4803 (XV դ., 63ա—68ա, թերի), 4929 (XV դ., 168ա—176բ), 4950 (XV դ., 128ա—137բ), 5406 (XV դ., 127բ—137ա), 7769 (XV դ., 125բ—131բ), 4764 (1534 թ., 70ա—78բ), 4716 (1581 թ., 35ա—40ա, թերի), 1357 (XVI դ., 223ա—235բ), 1730 (XVI դ., 46բ—65բ), 1732 (XVI դ., 136բ—162բ), 4774 (XVI դ., 147բ—155ա), 4789 (XVI դ., 232բ—240բ), 9063 (1623 թ., 156բ—165ա), 2116 (1637 թ., 156բ—167ա), 992 (1651 թ., 274բ—280ա), 871 (1680 թ., 54բ—61բ), 3300 (XVII դ., 56բ—69ա), 4726 (XVII դ., 158բ—163ա), 5387 (XVII դ., 51բ—54բ, թերի), 8917 (XVII դ., 54ա—61ա), 991 (1721 թ., 270բ—279բ), 7489 (1725/9 թ., 95ա—99բ), 2179 (1750 թ., 201բ—216բ), 3281 (1759/74 թ., 8ա—12բ), 1405 (1765 թ., 8բ—14բ), 5137 (XVIII դ., 56—66), 10714 (1843 թ., 42բ—50բ), 2786 (XIX դ., 49բ—55ա): Հետևյալ ձևազրեքներում ճառը բաժանված է երկու մասի՝ համապատասխան խորագրերով: 4505 (XV դ., 199բ—210բ), 4749 (1575 թ., 319ա—332բ), 4717 (1592 թ., 224բ—233բ), 4756 (XVI դ., 365ա—380ա), 4757 (XVI դ., 227ա—240բ), 4724 (1611 թ., 142ա—151ա), 4879 (XVII դ., 161ա—169բ), 4880 (XVII դ., 227ա—239ա), 10236 (1700/1 թ., 344ա—357ա), 2890 (1718 թ., 247բ—255դ), 9613 (1864 թ., 77ա—84բ):

5 Տե՛ս G. Garitte, Documents..., p. 23—116.

6 Թարգմանությունը կատարվել է ճառի վենետիկյան հրատարակության հիման վրա. տե՛ս Սրբյոն եփրեմի մատենագրությունը. հ. 4, Վենետիկ, 1836, էջ 107—124:

7 Ժ. Գարիտը նշում է եփրեմի ճառի հայերեն բնագիրը պարունակող 23 ձևազրեք, զգուշացնելով, որ ձևերի տակ տվյալներ չի ունեցել Մատթի անվան Մատենադարանի ընդօրինակությունների մասին: Այդ բացը լրացնելու համար ստորև տալիս ենք «Ի Յովնան» ճառի Մատենադարանում պահվող մեզ հայտնի ձևազրեքի ցանկը ժամանակագրական կարգով. 3752 XI դ., 34ա—37բ), 7729 (1200/2 թ., 131ա—135բ), 7574 (1239/40 թ., 310ա—323բ), 1525

Բացի թվարկված հոդվածներից, որոնք, ինչպես նշեցինք, ամբողջությամբ նվիրված են հայ միջնադարյան մշակույթի պատմությանը, հայագիտության հետ առնչվող մասնակի խնդիրներ են արծարծված նաև ժ. Գարիտի հոդվածների ժողովածուի մի շարք այլ նյութերում: Այսպես, «Սուրբ Անտոնիոսի վարքի հունարեն բնագիրը և հին թարգմանությունները հոդվածում» (էջ 192—203) վարքի ավելի ընդարձակ շարքում ներկայացված է նաև հայերեն թարգմանությունը (էջ 201—202): «Ոչ բյուզանդական քրիստոնյա Արևելքը արարական նվաճումներից առաջ» հաղորդման մեջ (էջ 647—661) տրված է 1944—1968 թթ. ընթացքում Բելգիայում հրատարակված կարևոր հայագիտական հետազոտությունների համառոտ մատենագիտությունը (էջ 653—655): Թարգմանության տեսության հարցերին ներվիրված ընդարձակ հոդվածում (էջ 676—717) առատորեն օգտագործված է հայկական նյութը (մ.թ.ա. էջ 694, 700—703, 709—711, 716): Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև ժ. Գարիտի հետևյալ երկու հոդվածները՝ նվիրված հայերենից թարգմանված վրացական բնագրերի քննությանը. «Ափրահատի VI հապի վրացերեն բնագիրը» (էջ 480—485) և «Հիպոպոդիտեսին վերագրված Հատատոյ գրքի վրացերեն բնագրի մի նոտ աղբյուրը» (էջ 606—614):

Հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել ժ. Գարիտի ևս մի հոդվածի վրա, որը թեև անմիջականորեն չի կապվում հայագիտական խնդիրներին, սակայն, կարող է օգտակար լինել հայկական ձեռագրերի հիշատակարաններում արտացոլված մի հետաքրքիր փաստի լուսարանման հարցում: Խոսքը վերաբերում է «Հունական ձեռագրերի հիշատակարանների մի բանաձևի մասին» հոդվածին (էջ 394—425), որում քննության է ենթարկվում ինչպես լատինական, այնպես էլ հունական ձեռագրերի հիշատակարանները: Բանաձևը, որ բացի հունական հիշատակարաններից, պատահում է նաև ղպտական, ա-

սորական և արաբական ձեռագրերում, ըստ ժ. Գարիտի, եզրագծական ծագում ունի: Նույն միտքը՝ «Զեոս երթայ, դառնայ ի հող, ի Գիրս մնայ յիշատակող» ձևով կամ նրա զանազան տարբերակներով լայն տարածում է գտել նաև հայկական ձեռագրերում: Առաջիկա անհատ է, թեև չի հիշատակվում, է այն թափանցել հայկական ձեռագրերի աշխարհը, ուստի արժե այդ ուղղությամբ պրպտումներ կատարել: Բանաձևի մեկ հայտնի հնագույն հիշատակությունը, որի վրա մեր ուշադրությունն է հրավիրել Մատենադարանի աշխատակից Ա. Տեր-Ստեփանյանը, վերաբերում է X—XI դարերին. «Ո՛հ, ձեռք, որ հողանաս, լի գիր, որ մնաս» (Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 3, Ճաշոց, Ժ—ԺԱ դդ., էջ 114ա) 9:

Կարծում ենք, որ ժ. Գարիտի հոդվածների վերահրատարակության այս շնորհակալ նախաձեռնությունը ոչ միայն մեծապես կդյուրացնի մասնագետների աշխատանքը, այլև անկասկած կընպաստի այդ հոդվածների նկատմամբ գոյություն ունեցած հետաքրքրության զգալի աճին:

8 Հմմտ. Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կադմեց Լ. Ս. Խաչիկյան. հ. Ա, Կրեան, 1955, էջ 547 (1443 թ.), հ. Բ, 1958, էջ 184 (1462 թ.), 280 (1468 թ.), 419 (1477 թ.), հ. Գ, 1967, էջ 128 (1488 թ.), 185 (1492 թ.), 265 (1493 թ.), 525 (XV դար): Հետագա դարերի հայկական ձեռագրերում բանաձևն ավելի հաճախ է պատահում:

9 Տե՛ս Հ. Տաշյան. Յուդայական հայերեն ձեռագրաց մասնագրանին Մխիթարեանց ի Վիեննա. Վիեննա, 1895, էջ 15: Բանասեր Ա. Մաթևոսյանը մեզ է տրամադրել 1284 թ. մի այլ ձեռագրի հետևյալ հիշատակությունը. «Գիրս հնանա. ձեռս հողանա. Աստուած միայն է միշտ և կա» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 487, էջ 365):

2. CLAUDE E. COX, *The Armenian Translation of Deuteronomy* (University of Pennsylvania. Armenian Texts and Studies, 2), Scholars Press, Chico, California, 1981, XXIV+415 p.

ԿԼԻՈՒ Ե. ԿՈՔՍ, Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանությունը (Պենսիլվանիայի համալսարան. Հայկական բնագրեր և ուսումնասիրություններ, 2), Չիկո, Կալիֆոռնիա, 1981, XXIV+415 էջ:

Գրքի ներածություն մեջ (էջ 1—13) հեղինակն անմիջապես հարկ է համարում ընդգծել, որ իր ձեռնարկած հրատարակությունը ներկայացնում է ոչ թե երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմա-

նություն բնական, վերականգնված բնագիրը, այլ նրա ձեռագրական վիճակի ճշգրիտ վերարտադրությունը (diplomatic edition, էջ 4): Բնագրի հրատարակության նման եղանակի ընտ-

րությունը բացատրվում է աշխատության հետապնդած նպատակներով: Հեղինակն իր առջև խնդիր է դրել պարզել հայերեն թարգմանության բնույթը (էջ 1): Աստվածաշնչի հունական Յոթանասինգ բնագրի քննության պահանջների նկատմամբ, այսինքն՝ պատասխանել այն հարցին, թե նրկորդ Օրինացի հայերեն թարգմանությունն ինչ տեղ է զբաղեցնում Յոթանասինգի բնագրական պատմության մեջ և որքանով կարող է նպաստել նրա նախնական բնագրի վերականգնմանը (էջ 13):

Աշխատության առաջին գլխում (էջ 15—70) Կ. Կոքսը տալիս է օգտագործված ձեռագրերի համառոտ նկարագրությունը (էջ 15—31)¹⁰, ապա մանրամասնորեն ներկայացնում է իր ընտրած աշխատանքային սկզբունքները, որոնք խորսխված են արդի բնագրագիտության նորագույն մեթոդական հիմքերի վրա: Հաշվի առնելով այդ սկզբունքների կարևորությունը հայերեն բնագրերի քննական հրատարակությունների պատրաստման գործում, հարկ ենք համարում ստորև հանգամանորեն անդրադառնալ դրանց: Կ. Կոքսն իր աշխատության մեջ քննության է ենթարկել նրկորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանության XII—XVIII դդ. 99 ընդօրինակություն: Բնագրի պատահականորեն ընտրված երեք հատվածներում (Դ, 1—20. ԺԶ, 1—20. Լ, 1—20) այս 99 ձեռագրերից յուրաքանչյուրը համեմատվել է Զոհրապյանի հրատարակության հետ, որով հնարավորություն է ստեղծվել պարզելու ընդօրինակությունների բնագրային խմբերը: Զոհրապյանի հրատարակության նկատմամբ եղած տարրեթևգվածները բաժանվել են երեք կարգի՝ գերադաս ընթերցվածներ (superior Readings), որոնց նախնականությունը հաստատվում է հունական և ասորական բնագրերով, ստորադաս ընթերցվածներ (inferior Readings), որոնց դեպքում, ընդհակառակն, նախընտրելի են Զոհրապյանի ընթերցումները, և չեզոք ընթերցվածներ (neutral Readings), որոնք առաջացել են գրչական և ուղղագրական բնույթի հանգամանքներով, հետեւաբար կապ չունեն հայերեն նախագաղափար բնագրի վերականգնման խնդրի հետ (էջ 31—44): Գերադաս և ստորադաս ընթերցվածների վիճակագրական հաշվառումը հեղինակ-

կին հիմք է տվել նրկորդ Օրինաց գրքի հայերեն բնագրի ընդօրինակությունները բաժանելու հինգ ձեռագրախմբի՝ ա, Ե, Ը, Ժ, Ե. ընդ որում, առաջին երեք խմբերում տարբերակելով երկուական, իսկ հինգերորդում՝ երեք ենթախումբ (էջ 45): Նույնպիսի վիճակագրական հաշվարկումներ կատարելով նաև ձեռագրախմբերի ներսում, Կ. Կոքսն ընտրել է այն ութ լավագույն ձեռագրերը (երեքը ա խմբից, երկուսը՝ Ե-ից և մեկական՝ ԸԺԵ-ից), որոնց համեմատության հիման վրա իրականացրել է նրկորդ Օրինաց գրքի հայերեն բնագրի իր հրատարակությունը (էջ 67): Ըստ աշխատասիրողի՝ հայերեն բնագրի հնագույն վիճակը ներկայացնում են ա խմբի ձեռագրերը՝ ընդօրինակված բուն Հայաստանի գրչական կենտրոններում (էջ 47), մինչդեռ Աստվածաշնչի Ոսկանյան և Զոհրապյան հրատարակություններն իրագործված են Ը խմբի՝ Կիլիկիայում ընդօրինակված ձեռագրերի հիման վրա (էջ 51), որոնք որոշ չափով հեռացել են հայերեն թարգմանության նախնական օրինակից: Միայն այս փաստն արդեն բավական է նախորդ հրատարակությունների նկատմամբ Կ. Կոքսի պատրաստած բնագրի առավելությունը տեսնելու համար:

Նրկորդ Օրինաց գրքի հայերեն բնագրի վերադասարկությունը զբաղեցնում է գրախոսվող աշխատության հաջորդ գլուխը (էջ 71—217): Ինչպես նշվեց, հրատարակության համար օգտագործվել է ութ ձեռագիր, դրանք են՝ Վենետիկի Մխիթարյան հավաքածուի № 1 (1319 թ.), № 6 (XIII—XIV դդ.), № 12 (1332 թ.), Նրուսատեմի Հայոց պատրիարքարանի № 1923 (1269 թ.), № 2561 (1654 թ.), Մաշտոցի անվան Մատենադարանի № 203 (XVII դար), № 347 (1657 թ.) և Լոնդոնի Աստվածաշնչական ընկերության 1667 թ. ընդօրինակված ձեռագիրը: Մասնակի համեմատությունների համար հաշվի է առնված նաև Վենետիկի Մխիթարյան հավաքածուի № 17 (1257—1341 թթ.) ձեռագիր Աստվածաշնչում: Որպես հիմնական բնագիր հրատարակված է նույն հավաքածուի № 12 ձեռագիրը, որը ներկայացնում է ա ձեռագրախումբի Զիմք ձեռագիրը վերադասարկված է անվտույն, պահպանելով նույնիսկ նրա կետադրությունը, ուղղագրական առանձնահատկություններն ու բառային հապավումները, կուտարվել են միայն աննշան սրբագրումներ՝ ակրեհայտ գրչական աղավաղումներ վերացնելու նպատակով: Մյուս ձեռագրերի տարբերությունները գիտեղծվել են հրատարակության տողատակում: Սույն գլխի հավելվածում (էջ 219—221) Կ. Կոքսը ներկայացնում է հայերեն նախնական բնագրի վերականգնման սկզբունքները: Նախ և առաջ նա նշում է, որ նրկորդ Օրինաց գրքի

10 Աստվածաշնչի հայկական ձեռագրերը Կ. Կոքսը դասակարգել է Ա. Զեյթունյանի առաջարկած եղանակով. հմտ. Ա. Զեյթունյան, Աստվածաշնչի հայերեն թարգմանության ձեռագրական միավորների դասակարգման մասին. — «Բանբեր Մատենադարանի», № 12, 1977, էջ 295—304:

Հայերեն թարգմանության բնագիրն աչքի է ընկնում համեմատաբար ուղղագրի և պարզ պատմությամբ. Զ և Ծ ձևագրախմբերը ծագում են մի ընդհանուր նախագաղափար օրինակից, Շ խումբը առանձնացել է Ե-ից, իսկ de խմբերն իրենց հերթին՝ Ը-ից, Հետևաբար՝ ա. երբ հիմք ձևադիրը (Վենետիկ, № 12) շեղվում է մյուս բոլոր ձևագրերից, ապա ամենայն հավանականությամբ նախնական է մեծամասնության ընթերցվածք. բ. երբ ձև խմբերը հակադրվում են մյուսներին, նախապատիվ պետք է համարել առաջինների ընթերցվածք. գ. երբ ա-ն միանակ հակադրվում է bcde խմբերին, նույնպես նախնական է հավանաբար ա-ի ընթերցվածք. դ. երբ ա խմբի որոշ ձևագրեր ունեն մի ընթերցվածք, իսկ մյուսները նույնանում են bcde խմբերին, ապա այդ երկու ընթերցվածքների նախապատվությունը որոշելու համար անհրաժեշտ է դիմել հունական նախօրինակի օգնությանը: Իսկ երբ վերջինս ինքն էլ ունի միևնույն երկու ընթերցվածքներ, ապա պետք է նախապատվություն տալ հունական այն ձևագրերին, որոնց հետ ընդհանրապես կապված է հայերեն բնագիրը:

Աշխատության երրորդ գլուխը (էջ 223—241) նվիրված է Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանության առանձնահատկությունների բնութագրմանը: Համեմատությունը ցույց է տալիս, որ թարգմանիչը ստորկոթն չի հետևել իր նախօրինակին, հունարենի դերբայները որպես կանոն վերարտադրել է դիմավոր բայերով (էջ 225—226), ելնելով նախադասության մտքից՝ ներկա ժամանակի բայերի փոխարեն հաճախ գործածել է ապառնի ժամանակի բայեր (էջ 226—227), երբեմն ստորոգյալները լրացրել է համապատասխան դերանվանական ենթակայներով (էջ 227), ավելացրել կամ բաց է թողել որոշ շաղկապներ և եղանակավորող բառեր (էջ 230—231), բավականին ազատ է վարվել բառերի դասավորության հետ (էջ 232) և այլն: Ավելի էական են այսպես կոչված մեկնողական բնութթի փոփոխությունները (էջ 232—233), որոնք կատարվել են հունական նախօրինակի այս կամ այն միտքը բացահայտելու, լրացնելու կամ ճշգրտելու նպատակով: Հաճախակի են այն դեպքերը, երբ հունարեն միևնույն բառը հայերենում վերարտադրված է տարբեր իմաստներով (էջ 238—239): Այսպես, ἐχέει բառը երկրորդ Օրինացի հայերեն բնագրում թարգմանված է շորս ձևով՝ անդ, ի նմա, ի նոսա և ի վերայ նորա: Ἀφ' ὧν բառի դիմաց մի դեպքում զերված է եղծանել, մի այլ դեպքում՝ բառնամ, մի երրորդ դեպքում՝ սատակել բայը: Իսկ քῆρυξ բառին հայերենում համապատասխանում են բան, պատգամ և ինչ բառերը և այլն: Թարգմա-

նության մեջ նկատվում են նաև ոճական բաղամագանության, վերացականի փոխարեն թանձրացականի գործածության դեպքեր (էջ 239—240): Հայերեն բնագրի նշված առանձնահատկությունները Կ. Կոքսի կարծիքով հայ թարգմանչին բնութագրում են որպես իր գործի հրամուտ վարպետի (էջ 241):

Չորրորդ գլխի (էջ 243—299) նպատակն է պարզել Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանության՝ հետևաբար նաև նրա հունական նախօրինակի տեղը Աստվածաշնչի հունարեն բնագրի պատմության մեջ (էջ 243): Հայերեն թարգմանությունն այդ նկատառումով համեմատության մեջ է դրված հունարեն բնագրի տարբեր ձևագրախմբերի հետ¹¹, Համեմատության արդյունքների վիճակագրական և բանասիրական վերլուծությունը հեղինակին հնարավորություն է տվել հանգելու համոզիչ եզրակացությունների (էջ 298—299), որոնք կարելի է ամփոփել հետևյալ կետերում: Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանության հունական նախօրինակը եղել է խառը բնութթի բնագիր ներկայացնող մի ընդօրինակություն: Հայերեն թարգմանության հիմքում ընկած է Ռոդոսյան խմբագրության ղեկավարի մի բնագիր, որը գործածության մեջ է եղել Կոստանդնուպոլսում¹², Սրանով, ի դեպ, մեկ անգամ ևս հաստատվում է Կորյունի և Խորենացու այն տեղեկությունը, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության վերջնական խմբագրումը կատարվել է Կոստանդնուպոլսից բերված հունական բնագրերի հիման վրա: Հայերեն թարգմանությունն ըստ Կ. Կոքսի՝ ամենասերտ բնագրական առնչություն ունի Ռոդոսյան խմբագրության Օ խմբի ձևագրերի և բյուզանդական տիպի բնագիրը ներկայացնող եմո՛ ձևագրախմբերի հետ: Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանության համաձայնությունը Ռոդոսյան ընթերցվածքներին կազմում է

¹¹ Համեմատությունները կատարվել են ըստ հետևյալ աշխատության. J. W. Wevers. Text History of the Greek Deuteronomy (Mittellungen des Septuaginta-Unternehmens, XIII). Göttingen, 1978, որը, սակայն, մեզ մատչելի չի եղել: Երկրորդ Օրինաց գրքի հունարեն բնագրի ձևագրախմբերի մասին տե՛ս Vetus Testamentum Graecum, III, 2, Deuteronomium, edidit J. W. Wevers. Göttingen, 1977, S. 7—41.

¹² Հմտ. նաև՝ C. E. Cox. Biblical Studies and the Armenian Bible, 1955—1980.—Revue Biblique. 89^e année, No 1, Janvier. Paris, 1982, p. 109—110.

30 տոկոս: Դա նշանակում է, որ հայերեն թարգմանությունը հանդիսանում է Որոգիների աշխատության լավագույն օժանդակ վկայություններից մեկը: Ինչ վերաբերում է բուլղանդական տիպի բնագրին, ապա հայերեն թարգմանությունն ավելի սերտ առնչակցություն ունի և ու, քան d և ձեռագրախմբերի հետ:

Քանի որ հայագիտության մեջ տիրում է այն հարծիքը, թե Աստվածաշնչի առաջին հայկական թարգմանությունը կատարվել է ասորերենից, ուստի Կ. Կոթսը հարկադրված է եղել քննելու նաև Երկրորդ Օրինաց գրքի հայերեն և ասորերեն բնագրերի առնչակցության հարցը, որին նվիրված է նրա աշխատության վերջին՝ հինգերորդ գլուխը (էջ 301—327): Նախ նա անդրադառնում է Թագաուրուքեանց Ա գրքի հայերեն թարգմանության առիթով շվեդացի Բո Յոնսոնի խրագործած նույն բնույթի քննության¹³ արդյունքներին (էջ 301—306), այնուհետև անցնում քուն Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանության այն ընթերցվածների վերլուծությանը, որոնք շեղվում են հունարեն նախօրինակից և համընկնում Աստվածաշնչի ասորական Պեշիտտա բնագրին (էջ 306—327): Համապատասխանությունների մեծ մասը վերաբերում է բառերի շրջադասության դեպքերին, ինչպես՝ ասէ ցիս տէր փիս ասէ տէր ցիս, այս մեծ փիս մեծ այս և այլն: Հայերեն թարգմանությունը պարունակում է հունական ողջ ձեռագրական ավանդույթից շեղվող շրջադասության 90 դեպք, որոնցից 73-ում հանդես է գալիս միայնակ, իսկ մնացած 17-ում՝ համընկնում Պեշիտտային (էջ 315—322): Հաշվի առնելով վերջիններիս աննշան բանակը և հայ թարգմանչի ազատ վերաբերմունքը բառերի դասավորության նկատմամբ, Կ. Կոթսը հայ-ասորական այդ համապատասխանությունները համարում է պատահականության արդյունք (էջ 322): Այնուհետև նա քննության է

ենթարկում հայերեն թարգմանության և Պեշիտտայի համապատասխանության ավելի էական երեք դեպք. Գ 11 (սկայից — ցոնր՝ փիս շոփօշ), Դ 11 (առ ստորոտով լերին — bspwly twr՝ փիս սոփ օփօշ) և ԻԳ 12 (յայտ իցէ — nhw՝ ydy՝ փիս չօշտ): Այս համապատասխանությունները հեղինակի կարծիքով կարող են բացատրվել և՛ պատահականությամբ, և՛ Պեշիտտայի ազդեցությամբ (էջ 323—326): Իր եզրակացությունը տվյալ խնդրի վերաբերյալ Կ. Կոթսը ձևակերպում է հետևյալ տողերում (էջ 326—327): Միանգամայն հնարավոր է, որ հայ թարգմանիչը ծանոթ է եղել ասորական բնագրին, սակայն հայերեն թարգմանության և Պեշիտտայի ընդհանրությունների շնչին քանակը բացառում է նրանց բնագրական կապը: Երկրորդ Օրինացի մեզ հասած հայերեն բնագրի հիման վրա հրեանարվոր չէ պարզել, թե այս գիրքը նախապես թարգմանված է եղել ասորերենից:

Աշխատության հավելվածում (էջ 329—330) դերադաս, ստորադաս և շեղոք ընթերցվածների ստորաբաժանումով Կ. Կոթսը ներկայացրել է Երկրորդ Օրինաց գրքի Դ 1—20, ԺՁ 1—20 և Լ 1—20 համարներում հայկական ձեռագրերի ունեցած տարբերությունները Ձոհրապյանի հրատարակության նկատմամբ: Գրքին կցված են նաև օգտագործված զրականության (էջ 381—394), աստվածաշնչական վկայակոչումներ (էջ 397—407), տեղանունների (էջ 408—409), անձանունների (էջ 410—414) և առարկայական (էջ 415) մանրամասն ցանկեր:

Որպես եզրակացություն կարելի է նշել հետևյալը. Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանության հետ կապված բոլոր կարևոր բանասիրական և բնագրագիտական խնդիրները Կ. Կոթսի մասնագիտական բարձր մակարդակով գրված աշխատության շնորհիվ ստացել են իրենց բավարար լուծումը: Ստեղծված է այն գիտական հենարանը, որի հիման վրա պետք է կատարվի հաջորդ, վճռական քայլը՝ հայերեն քննական բնագրի պատրաստման աշխատանքը, որը, հուսով ենք, նույն հաջողությամբ կարող է իրականացնել հարգարժան հեղինակը:

¹³ S. E. Bo Johnson. Die armenische Bibelübersetzung als hexaplarischer Zeuge im I. Samuelbuch (Collectanea Biblica, Old Testament Series, 2). Lund, 1968, S. 69—73.

3. GABRIELE WINKLER, *Das Armenische Initiationsrituale. Entwicklungsgeschichtliche und liturgievergleichende Untersuchung der Quellen des 3. bis 10. Jahrhunderts* (*Orientalia Christiana Analecta*, 217), Roma. 1982, 476 S.

ԿԱՔՐԻՆԷԼ ՎԻՆԿԼԵՐ, Մկրտության հայկական արարողությունը. III—X դարերի աղբյուրների ֆենոլոգիաները պատմական զարգացման և համեմատական ծիսագիտության տեսանկյունով, Հռոմ, 1982, 476 էջ:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ նման մասնակի հարցի նվիրված ուսումնասիրությունը նախատեսված է միայն եկեղեցական ծեսի պատմությամբ հետաքրքրվող մասնագետների համար: Այնինչ հնդիսական իր առջև գրված խնդրի լուսարանման առիթով անդրադառնում է պատմամշակութային նշանակություն ունեցող այնպիսի ընդհանուր երևույթների, որ աշխատությունը լայն գիտական ընդգրկում է ձեռք բերում:

Համեմատարար վերջերս մկրտության հայկական արարողությանը նվիրված մի ընդարձակ հոդվածադրով հանդես էր եկել Վենետիկի Մըխիթարյան միաբանության անդամ Սահակ Ճեմճեմյանը, հենվելով բացառապես հայկական հին և նոր աղբյուրների վրա¹⁴: Ի տարբերություն Ս. Ճեմճեմյանի՝ Գ. Վինկլերն օգտագործել է մկրտության հայկական արարողությանը վերաբերող միայն հնագույն աղբյուրները և հարցը քննել պատմական ավելի լայն պատաստի վրա, միաժամանակ հաշվի առնելով հունական և ասորական եկեղեցական ավանդույթների տվյալները: Գրախոսվող աշխատության մեջ հանգամանորեն արծարծված ծիսական հարցերի քննությունը թողնելով ավելի իրազեկ մասնագետների, հարկ ենք համարում ստորև ներկայացնել հեղինակի հիմնական եզրակացությունները պատմամշակութային բնույթի ընդհանուր խնդիրների վերաբերյալ, որոնք բնականաբար բխում են բուն ծիսագիտական քննության արդյունքներից:

Աշխատությունը բացվում է օգտագործված աղբյուրների և գրականության մի ընդարձակ ցանկով (էջ 15—44), որ վկայում է հեղինակի մատենագիտական հարուստ գիտելիքների և իր ուսումնասիրությունը համապարփակ դարձնելու ձգտման մասին:

¹⁴ Տե՛ս Ս. Ճեմճեմյան. Մկրտության խորհուրդի բանաձևը.—«Բազմավեպ», 1967, էջ 135—142: Երախաներու օծումը հայ եկեղեցվո մեջ.—«Բազմավեպ», 1968, էջ 21—29: Մկրտության արարողությունը Մաշտոցներու մեջ.—«Բազմավեպ», 1971, էջ 25—35, 1972, էջ 183—210:

Գրականության ցանկին հաջորդում է գրքի հանգամանալից ներածությունը (էջ 45—101), որը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը (էջ 47—75) մի թուղթիկ ակնարկ է Հայաստանի վաղ շրջանի քաղաքական պատմության, հայոց դարձի հանգամանքների, հայկական ալբյուրների ստեղծման շարժառիթների մասին: Ներածության երկրորդ մասում (էջ 76—101) ներկայացված են հարցի ուսումնասիրման նախորդ փորձերը, առաջադրված հետազոտության նպատակն ու մեթոդաբանական սկզբունքները և մկրտության հայկական արարողությանը վերաբերող հայկական ու ասորական հնագույն աղբյուրները: Հայկական հնագույն աղբյուրներ հասկացության տակ Գ. Վինկլերը նկատի ունի Ազաթանգեղոսի հայերեն խմբագրությունը և Գրիգոր Լուսավորչի վարքի հունական բնագիրը¹⁵, որը նույնպես ծագում է հայերեն մեզ չհասած մի նախօրինակից: Հեղինակը մեկ առ մեկ ներկայացնում է այս երկու աղբյուրների հայկական, հունական, արաբական, վրացական, լատինական, ասորական, եթովպական բնագրերը և մի պարզ աղյուսակով (էջ 92) ցույց տալիս նրանց ծագումնաբանական փոխառությունները: Աշխատության այս բաժնում Գ. Վինկլերը հանդես է դալիս որպես ազաթանգեղադատության հմուտ մասնագետ, որի գրչին, ի դեպ, պատկանում են նաև Ազաթանգեղոսի պատմությանը նվիրված հատուկ ուսումնասիրություններ (էջ 43—44): Ինչ վերաբերում է հնագույն ասորական աղբյուրներին, ապա նրանցից նկատի են առնված Թովմաս և Հովհաննես առաքյալների անվավեր վարքերը, Ափրահատ Զգոնի և Նփրիմ Ասորու ճառերը, ինչպես նաև որոշ վկայաբանական գրվածքներ:

Աշխատության առաջին մասում (էջ 103—175) Գ. Վինկլերը վերականգնում է մկրտության արարողությունը նախ ըստ վերը նշված հայկական, այնուհետև՝ ըստ ասորական աղբյուրների: Բարդությունը կայանում է նրանում, որ այդ աղբյուրները ոչ թե մկրտությանը նվիրված կանոնական բնագրեր են, այլ արարո-

¹⁵ Տե՛ս G. Garitte, Documents..., p. 23—116.

դուության դիպվածային նկարագրություններ: Մասնավորապես հայկական արարողության վերականգնման համար հիմք է ծառայել Տրդատ թագավորի և նրա ընտանեկիցների մկրտության դրվագը՝ նկարագրված Ագաթանգեղոսի պատմության մեջ և Գրիգոր Լուսավորչի վարքում: Աղբյուրների ձիսագիտական և բանասիրական քննությունը հեղինակին բերում է այն համոզման, որ մկրտության հնագույն հայկական արարողությունն իր հիմնական գծերով համընկնում է ասորականին (էջ 131—132):

Այս եզրակացությունը նորանոր փաստարկներով ամրապնդվում և հիմնավորվում է աշխատության հաջորդ՝ ամենաընդարձակ մասում (էջ 177—448), որը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլխում (էջ 177—233) հանդիպող դերմաներեն թարգմանությամբ հրատարակված է մկրտության հայկական կանոնը IX—X դդ. հրեազույն երկաթագիր «Մաշտոցների» հիման վրա (Վենետիկի Մխիթարյան հավաքածուի ձեռ. № 320 և Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 1001) 16: Նույն բնագիրը հրատարակել է նաև Ս. Զեմձեմյանը, սակայն անհամեմատ ավելի շատ՝ 24 ձեռագրի համեմատության հիման վրա 17: Առաջին հայացքից զարմանալի թվացող այս փաստը բացատրվում է երկու հեղինակների հետապնդած տարբեր նպատակներով: Եթե Ս. Զեմձեմյանն իր առջև խնդիր է դրել մկրտության հայկական արարողությունը դիտել պատմական զարգացման մեջ և լուծել Հայոց եկեղեցու մերօրյա պահանջների հետ կապված որոշ գործնական հարցեր, ապա Գ. Վինկլերին, ինչպես վերը նշվեց, հետաքրքրել է այդ արարողության նախնական վիճակը: Այս առումով երկու գիտնականներն էլ ճիշտ են վարվել՝ ընտրելով միևնույն բնագրի հրատարակության տարբեր եղանակներ:

Երկրորդ գլուխն (էջ 235—333) իրենից ներկայացնում է մկրտության հայկական արարողության բառարանը՝ կազմված Վենետիկի Մխիթարյան հավաքածուի № 320 ձեռագրի Մաշտոցի և Ագաթանգեղոսի պատմության հայերեն բնագրի հիման վրա: Բառարանում հատուկ ուշադրություն է հատկացված բառերի ստուգաբանությանը, ավելի ճիշտ՝ այն հարցին, թե որ

լեզվի միջոցով է այս կամ այն փոխառյալ բառը թափանցել հայերենի մեջ: Փոխառությունների մեծ մասը, ինչպես և սպասելի էր, կազմում են իրանական բառեր: Երկրորդ տեղը բռնում են արամեա-ասորական փոխառությունները, որոնց թվում ընդգրկված են նաև որոշ իրանական և հունական բառեր՝ անցած հայերենին արամեանի կամ ասորերենի միջոցով: Բառարանի արամեա-ասորական շերտն ըստ այդմ բաղկացած է հետևյալ 16 բառերից. ամեն, արբալ, բեմ, ևկեղեցի, ի օեոն, հեքանոս, Մարիամ, Յոզանան, շաբար, ռաբբի, սառանայ, սատանայական, տրղայ, ֆահանայ, ֆահանայություն, ֆառգորին, Հունարենից կատարված փոխառություններն րեղամենը ութն են. կանոն, Յովհաննէս, սաղմոս (սաղմոսեմ), փակեղն, Քրիստոս (ֆրիստոնայ, ֆրիստոնէություն): Մկրտության կանոնի հայերեն բնագրի բառապաշարի իրանա-ասորական շերտի զգալի գերակշռությունը հունականի նրկատմամբ Գ. Վինկլերը համարում է ևս մի ապացույց այն իրողության, որ ի տարբերություն կապադովկական-հունական ավանդույթի հիման վրա կազմված հայերեն Պատարագամատուցի, մկրտության հայկական արարողությունը ձևավորվել է Պարսկահայաստանում. այսինքն՝ ասորական եկեղեցու ազդեցության ոլորտում (էջ 80—81, 331—333), նույն նկատառումով նույն կարևոր նշանակություն է տալիս նաև այն փաստին, որ արարողության երկու հայերեն անվանումներն էլ՝ և՛ կնիքը, և՛ մկրտությունը, սեմական ծագում ունեն (էջ 332): Բառարանության առիթով հարկ ենք համարում նշել, որ եթե սեմական բառերի նկատմամբ Գ. Վինկլերի դիտողությունը միանգամայն իրավացի է, ապա նույնը չի կարելի ասել իրանական փոխառությունների մասին, որոնք հնուց ի վեր լինելով հայոց լեզվի բառապաշարի հիմնական բաղադրամասերից մեկը, չեն կարող կողմնորոշիլ դեր խառնալ քրիստոնեական մշակութային հարաբերությունների պարզաբանման գործում: Վստահ կարելի է լինել, որ նույնիսկ հունական ավանդույթի հիման վրա կազմված հայերեն Պատարագամատուցներում իրանական փոխառությունները նույնպիսի գերակշռություն կունենան հունական բառերի նկատմամբ:

Աշխատության երկրորդ մասի երրորդ գլխում (էջ 335—448) մկրտության հայկական արարողությունն իր բարդ կառուցվածքի յուրաքանչյուր տարրով համեմատված է ասորական և հունական ղույնազան աղբյուրների հետ՝ նրա ընդհանրություններն ու յուրահատկությունները պարզելու նպատակով: Մկրտության հնագույն հայկական արարողությունն ըստ Գ. Վինկլերի ունի հետևյալ կառուցվածքը՝ 1. Նախապատրաստության կամ այսպես կոչված երախայության

16 Մաշտոց ժողովածուների մասին տե՛ս վերջերս լույս տեսած հետևյալ հոդվածը. Ա. Ս. Արևշատյան. Հայկական Միսարանի կազմավորման և զարգացման փուլերը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 3, էջ 144—150:

17 Տե՛ս Ս. Զեմձեմյան. Կանոն Մկրտության.— «Բազմավեպ», 1971, էջ 36—46, 1972, էջ 211—231:

շրջան, որ տևում է մոտ երեք շաբաթ, 2. Մեկրտություն օրվա համար նախատեսված նախամկրտական արարողություններ, որոնցից շորսը՝ հրավիրումը, հորդորական աղոթքը, հրաժարումը սատանայից և հավատի խոստովանությունը կատարվում են եկեղեցու դռանը, իսկ երկուսը՝ յուրի օրհնությունն ու ջրի օրհնությունը, տնմիջապես եկեղեցի մտնելուց հետո, 3. Բուն մկրտությունը, կազմված հետևյալ երեք արարողություններից՝ գազաթի եռակի ցողումը, մարմնի եռակի ընկղմումը ջրի մեջ և ողջ մարմնի լվացումը, 4. Մկրտությունից հետո մարմնի անդամների օծումը (որը, ի դեպ, սկզբնական դարերում կատարվել է մկրտությունից առաջ, այն էլ սահմանափակվելով միայն գլխի օծումով) և, վերջապես, մկրտվողի հաղորդությունն ու արձակումը (էջ 335, 370—371, 433, 443): Միսական մանրամասների համեմատական քննությունը հեղինակին նորից հանգեցնում է

այն եզրակացության, որ մկրտության հայկական հնագույն արարողությունը՝ ներկայացված Ագաթանգեղոսի պատմության մեջ և երկաթագիր Մաշտոցներում, ծագում է ասորական նախատիպից, սակայն Մաշտոցների պարունակած մկրտության կանոնը կրել է նաև ասորա-պաղեստինյան ու կապադովկիական ավանդույթի ազդեցությունը (էջ 448): Այսպիսով, հայ-ասորական եկեղեցական-մշակութային հարաբերությունները, որոնք մինչ այժմ ուսումնասիրվել են պատմագրական աղբյուրների և ասորերենից կատարված թարգմանությունների վերլուծության հիման վրա, Գ. Վինկլերի աշխատության շնորհիվ իրենց լուսաբանությունն են գտնում նաև ծխափտական քննության տվյալներով: Մեր կարծիքով սա է գրախոսվող աշխատության հիմնական արժանիքը:

Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿԻՄ ՄՈՒԻՐԱՒՅԱՆ, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ,
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983, 263 էջ:

Հայ թարգմանական գրական և գիտական ժառանգության մեջ հատուկ տեղ ու նշանակություն ունի Գրիգոր մեծ կապադովկիացիների՝ Քարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակը, որը հայ իրականության մեջ հայտնի է եղել դեռ նախքան մեր լեզվի հայերենագիր դառնալը: Այնուհետև, թարգմանվելով հայերեն, ողջ միջնադարում և նույնիսկ մինչև մեր օրերը արժանացել է սեփական ուշադրության:

Ինքնին հասկանալի է վերոհիշյալ հուշարձաններին առնչվող ուսումնասիրությունների անհրաժեշտությունն ու բացառիկ շահագրգռությունը գիտության համար ընդհանրապես, հայագիտության համար մասնավորապես: Ընդգծելով հանդերձ նախընթաց հայագետների ծառայությունները այս ասպարեզում, պետք չէ անտեսել, որ մեծ ծավալի և լայն ընդգրկումների գիտահետազոտական աշխատանքների պակասը դեռ պաշխի է: Կիմ Մուրադյանն այսօր այն քչերից մեկն է, որն իր գիտական, բանասիրական-բնագրագիտական ջանքերը ներդնում է դրանց ուսումնասիրության, արժեքավորման և հրապարակման շնորհիվ գործում: Նա արդեն լույս է բերել իր երկրորդ մենագրությունը, որը և հարկ ենք համարում ներկայացնել մասնագետ թեթեղողին:

Գրիգոր Նազիանզացին (Աստվածաբան) քրիստոնյա եկեղեցու վաղ միջնադարի (328—389 թթ.) հուշակավոր հույրերից է, եկեղեցական-հասարակական գործիչ, գիտնական ու մատենագիր: Նրա կյանքն ու գործունեությունը գիտական աշխարհին ծանոթ են: Մասնավոր ըլլալուց հետո մկրտության մեջ նրա մատենագրական վաստակի ուսումնասիրությունը ունի հին և արդյունալի պատմություն: Սակայն վաղուց նկատված իրողություն էր նաև, որ այդ կապադովկյան կուտակված արժեքավոր շատ նյութ կա հայ մատենագրության մեջ: Վատահ կարելի է ասել, որ համառ ու երկարատև ջանքերով բացահայտված և այս աշխատության մեջ բերված հանքերն նյութը գերադասեցում է բոլոր ենթադրությունները:

Առավելագույն չափով ձեռագիր այս փաստագրական նյութի ուշադիր ու բարեխիղճ քննությունը հեղինակը նախ պարզաբանում է, թե հայ իրականության մեջ ի՞նչ էր հայտնի նրա կյանքի ու գործունեության մասին, ինչպե՞ս էին բնորոշում և գնահատում նրա անձն ու վաստակը, թե ինչու՞ պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր շարժառիթներով են դիմել և անդրադարձել նրան: Կասկած չկա, որ նշված պարզաբանումները շատ են հետաքրքրելու նաև օտար համապատասխան մասնագետներին և այս առումով դրանց շահեկանությունը ակնհեր է: